



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

14 մարտի 2022 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Է. Շաթիրյանի  
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի  
Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Գայանե Շալունցի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Գայանե Շալունցի դիմումը (ներկայացուցիչ՝ Վ. Հակոբյան) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի փետրվարի 18-ին (դիմումն ուղարկվել է համապատասխանեցման «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին կցվում են՝ 1) լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ» պահանջին, և մատնանշված թերությունը շտկվել է): Դիմողը խնդրում է.

«(...) ինցիդենտ վերահսկողության շրջանակում որոշել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի, դրա իրավակիրառ պրակտիկայում առկա մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համապատասխանության հարցը»:

2. Ըստ դիմողի՝ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/6966/05/16 վարչական գործով 16.11.2021 թ. որոշմամբ վիճարկվող իրավադրույթներին տրվել է այնպիսի մեկնաբանություն, որն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև դրա հետ դիմումի առարկայական շրջանակներում համակարգային կապակցված՝ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին: Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող իրավադրույթների per se հակասահմանադրականությունը անխուսափելիորեն հանգեցրել է (վերաճել է) դեֆեկտիվ իրավակիրառման պրակտիկայի հաստատմանը:

Դիմողի կարծիքով՝ սույն գործով Վճռաբեկ դատարանը չի ինքնասահմանափակվել Սահմանադրության 50-րդ հոդվածով նախատեսված՝ պատշաճ վարչարարության իրավակազմի որակական՝ արդարացի վարչարարության սկզբունքապոստուլատով, այլ կիրառելով հանրային-իրավական բնույթի հարաբերությունների նկատմամբ «կիսով չափ» աշխատանքային, «կիսով չափ» հանրային-իրավական օրենսդրական կարգավորումներ՝ խեղաթյուրել է պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը: Վճռաբեկ դատարանի իրավամեկնաբանության հետևանքով, դիմողի գնահատմամբ, ստեղծվել է մի վիճակ, երբ անձը, փաստացի գտնվելով հանրային-իրավական հարաբերությունների մեջ, ենթադրյալ հանրային-իրավական նշանակություն ունեցող իրավախախտման համար կարող է ենթարկվել մասնավոր-իրավական՝ աշխատանքային օրենսդրական իրավանորմերով սահմանված պատասխանատվության, որն ուղղակիորեն նսեմացնում է պատշաճ վարչարարության

իրավունքի իրավակազմի որակական «արդարացիության» հատկանիշը և հանգեցնում հիմնական իրավունքի խեղաթյուրմանը:

Ըստ դիմողի՝ «(...) «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը և դրա իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով թույլատրում է քաղաքացիական ծառայողին կարգապահական խախտում կատարելու օրվանից՝ վեց ամսից ավելի անցնելու պարագայում, վաղեմությունը անցած կարգապահական խախտումը մեկ այլ՝ կարգապահական խախտման հետ համակցության մեջ դիտարկել, և այդ «փոստային համակցությունը»՝ իբրև բավարար հիմնափաստարկ ներկայացնելը՝ հանրային ծառայողի կողմից իր աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ իրականացման վերաբերյալ՝ հակասում է ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին՝ խախտելով դիմողի՝ **աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը**»:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանություններով.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում՝ հիմնավորելով նաև իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Ընդ որում, սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում ընկած են ոչ թե կոնկրետ գործի փաստական և/կամ իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ **վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:**

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը, ըստ էության, վիճարկվող նորմերի հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում, իսկ որպես փաստարկ ներկայացվող կարծիքներն առավելապես վերաբերում են **դատարանների (մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի) գործողությունների/դատական ակտերի իրավաչափությանը:**

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ սույն գործով դիմողի նկատմամբ ենթադրյալ անբարենպաստ իրավական հետևանքները, դիմողի գնահատմամբ, առաջացել են թիվ ՎԴ/6966/05/16 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 16.11.2021թ. որոշմամբ, և վիճարկելով խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը՝ դիմողն ըստ էության բարձրացնում է Վճռաբեկ դատարանի որոշման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության առումով:

Այսպես՝ դիմողը, մասնավորապես, նշել է. «Սույն գործով ՀՀ Վճռաբեկ դատարանը չի ինքնասահմանափակվել Սահմանադրության 50-րդ հոդվածով նախատեսված՝ պատշաճ վարչարարության իրավակազմի որակական՝ արդարացի վարչա-

րարության սկզբունք-պոստուլատով: Այլ՝ կիրառելով հանրային-իրավական բնույթի հարաբերությունների նկատմամբ «կիսով չափ» աշխատանքային, «կիսով չափ» հանրային-իրավական օրենսդրական կարգավորումներ խեղաթյուրել է պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը. Վճռաբեկ դատարանի իրավամեկնաբանության հետևանքով՝ ստեղծվել է մի վիճակ, որ անձը, փաստացի գտնվելով հանրային-իրավական հարաբերությունների մեջ, ենթադրյալ հանրային-իրավական նշանակություն ունեցող իրավախախտման համար կարող է ենթարկվել մասնավոր-իրավական՝ աշխատանքային օրենսդրական իրավանորմերով սահմանված պատասխանատվության, որն ուղղակիորեն նսեմացնում է պատշաճ վարչարարության իրավունքի իրավակազմի որակական «արդարացիության» հատկանիշը և հանգեցնում հիմնական իրավունքի խեղաթյուրմանը»:

Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ **Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատումը, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:**

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց՝ դիմողն իրականում առաջ է քաշում **Վճռաբեկ դատարանի դատական ակտի/գործողությունների իրավաչափության հարց**, ինչը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Համաձայն Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում, ***եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանա-

դրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես **Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Գայանե Շալունցի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Է. Շաթիրյան

Ա. Խաչատրյան

Վ. Գրիգորյան

14 մարտի 2022 թվականի  
ՍԴԴԿՈ-16